

**ԼԻԼԻԹ ԿԱՌԼԵՆԻ
ԵՓՐԵՄՅԱՆ**

*Արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ,
Գատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ,
ԵՊԿ Միջառարկայական Մասնագիտացման
Կենտրոնի հիմնադիր-ղեկավար*
E-mail: mikaelterlemez@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.2.65-34

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 22.10.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 10.10.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.9.2023 թ.

ԻՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ...

Զեկույցը կարդացվել է 2019 թվականի
ԵՊԿ բուհական գիտաժողովի շրջանակներում

Անվտոմում

Հոդվածն անդրադառնում է ՀՀ Հեղինակային օրենքի դրույթներին՝ համադրելով դրանք համացանցում տարածում ստացած հեղինակի մի շարք հարցազրույցների հեղինակության խնդրի հետ: Այն դեպքում, երբ զրուցավարը հրատարակում է հարցազրույցն առանց իր ուղիղ հարցերի՝ որպես զրուցակցի կողմից առաջին դեմքով ներկայացվող տեքստ, արդյոք նա կորցնում է իր հեղինակային իրավունքները այդ տպագրված նյութի նկատմամբ՝ սա է հոդվածում արծարծվող հիմնական խնդիրը, որը բացասական պատասխան ունի, քանի որ, ըստ ՀՀ գործող օրենքի, հարցազրույցը երկու հեղինակ ունի:

Բանալի բառեր

Հեղինակային իրավունք, Կոմիտաս, լրագրություն, «Նովոյե Վրեմյա», հարցազրույց, Համացանց, արվեստաբանություն:

Abstract

*PhD in Arts, Docent at Yerevan Komitas State Conservatory, Head of the Department of History and Theory of Performing Arts at YSC Lilit Karlen Yepremyan. - "Following My Copyright".
This article addresses issues of copyright concerning several articles by Lilit Yepremyan, published in the Yerevan newspaper "Novoye Vremya" with the author's signature, but subsequently distributed online without indicating her name. Whether the fact that the interviewer's direct questions are excluded from the printed text in the interview can be a reason for the absence of the latter's copyright - this is the main issue of the publication. The answer is no, because due to the current Copyright Law in Armenia, the interview has two authors.*

Key Words: copyright, Komitas, journalism, "Novoye Vremya", interview, Lnternet, art studies.

Абстракт

*Кандидат искусствоведения, доцент ЕЛК им.Комитаса, заведующая кафедрой истории и теории исполнительского искусства Лилит Карленовна Епремян. - "По следам моего авторского права".
Статья затрагивает проблемы Авторского права в связи с рядом статей Лилит Епремян, опубликованных в ереванской газете «Новое Время» с подписью автора, однако распространенных на просторах Интернета без указания ее имени. Может ли тот факт, что в интервью исключены из печатного текста прямые вопросы интервьюера, стать основанием для отсутствия авторских прав последнего - вот основной вопрос публикации. Ответ здесь отрицательный, поскольку в силу действующего в Армении Закона об авторских правах, интервью имеет двух авторов.*

Ключевые слова: авторское право, Комитас, журналистика, «Новое Время», интервью, Интернет, искусствоведение.

Բախվելով համացանցում (և ոչ միայն) տողերիս հեղինակի հոդվածների օգտագործման կենդանի պրակտիկային՝ ինքս ինձ համար փորձեցի պարզաբանել հեղինակային իրավունքի հետ կապված որոշ հարցականներ: Հեղինակային իրավունքի խնդրին անդրադարձա հաշվի առնելով համացանցի զարգացման ներկա փուլը և այդ

ամենագոր հաղորդակցման գործիքն իմ՝ որպես երաժշտագետի և լրագրողի, մասնագիտական գործունեության վրա ակտիվ ներգործություն ունենալու հանգամանքը:

Խոսքը «Նովոյե Վրեմյա» («Новое Время») երևանյան ռուսալեզու թերթում լույս տեսած մի շարք հոդվածներիս

մասին է, որոնք այս կամ այն ձևով ժամանակի հետ օտարվել են ինձանից: Որոշ ընդհատումով աշխատել եմ այդ պարբերականում 1996-2018 թթ.: Իմ մասնագիտական կայացման գործում դժվար է գերազանահատել համագործակցությունը տաղանդավոր անհատականության՝ հայտնի կոմպոզիտորական տոհմի ներկայացուցիչ, «Նովոյե Վրեմյա» թերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր Ռուբեն Սաթյանի հետ, որը մեծապես նպաստեց Հայաստանում լրագրության և հատկապես արվեստաբանության զարգացմանը: Հարցը ոչ այնքան արվեստին առնչվող հրապարակված հոդվածների ահռելի քանակի, որքան մեզանում նոր ոճ ստեղծելու, ձևավորելու և մշակելու մասին է: Ռուսախոս ընթերցողի համար, որը կարդում էր մեզ ինչպես Հայաստանում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս, նյութերը պետք է համապատասխանեին ժամանակակից միջազգային պահանջներին: Հնաոճ, ձանձրույթ առաջացնող ակադեմիական հոդվածները, որոնք խորհրդային շրջանում չէին հակասում թերթերի պաշտոնական ձևաչափին, նոր՝ հետխորհրդային ազատատենչ մթնոլորտում չէին ընդունվում՝ միանգամից հայտնվելով խմբագրի գամբյուղում: Վերջինս մեկ ակնթարթում տրամանկյունով, մի հայացքով չափելով տեքստը, տալիս էր իր վերջնական եզրակացությունը: Նյութը պետք է կարդացվեր մեկ շնչով, թեև երբեմն 10 տպագրական էջի ծավալ ուներ: Միաժամանակ այն պետք է լիներ խորը, բովանդակալից և գեղարվեստական՝ բարձրաճ լեզվամտածողությամբ:

Թերթի այսօրինակ հոդվածների շարքում առանձնահատուկ տեղ ունեին հարցազրույցները: Ռուբեն Սաթյանն իմ հոդվածները չէր ստուգում՝ կարդում էր մյուս օրը վաղ առավոտյան արդեն տպագրված և տաք հետքերով փոխանցում իր, ընտանիքի անդամների և իրեն արդեն հասած ընթերցողների կարծիքները՝ երբեմն անկեղծորեն գովելով, երբեմն հայտնելով իր անհամաձայնությունը և հստակ դիտողություններ անելով:

Եվ, օրերից մի օր, Սաթյանն ինձ հետևյալ նկատողությունն արեց (արդեն չեմ հիշում, թե որ հոդվածի հետ կապված, բայց խոսքը հարցազրույցի մասին էր). «Ո՞ւմ ես զարմացնում քո հարցերով»: Բացատրեց, որ դրանք խանգարում են զրուցակցի սահուն խոսքին, ասես կտրատում են տեքստը և շեշտադրում զրուցավարի, այլ ոչ զրուցակցի մտտեցումները:

Դե, եթե մեկ ուրիշը, որոշ հետևություններ անելով, հաջորդ անգամ կկրճատեր իր խոսքը, ես, չափազանց ազդվելով ասվածից, ընդհանրապես հանեցի տեքստից հարցերը և սկսեցի գրել ուղիղ խոսքով, իմ հերոսների անունից՝ առաջին դեմքով: Ինքնախոստովանանքի նման մի բան ստացվեց, որովհետև սովորաբար խորն անձնական բնույթի էին իմ հարցազրույցները: Բայց իհարկե, նախաբանում («врезка»-ում) անհրաժեշտաբար նշելով, որ սա իմ հեղինակային հարցազրույցն է, այսպես ասած, էքսկյուզիվ, հատուկ «Նովոյե Վրեմյա» թերթի համար:

Երբ համացանցը բոլորիս հասանելի դարձավ, պարզվեց, որ իմ որոշ հոդվածներ, պահանջված լինելով, այսպես ասած, «ոտքեր են առել» և քայլում են առանց իմ հեղինակային ուղեկցության, որպես զրուցակցի կողմից գրված հոդվածներ: Չնայած այն հանգամանքին, որ հոդվածների վերնագրերի հարևանությամբ կամ գլխագրում միշտ նշված է եղել հեղինակի անունը:

Սա կատարվում էր այնպիսի հաճախակի պարբերականությամբ, որ ես արդեն սկսեցի մտածել, գուցե սա ի՞նչ մեղավորությունն է, գուցե իմ ընտրած «հարցազրույց, առանց տեսանելի հարցերի» ֆորմատի դեպքում այդպես էլ պետք է լինե՞ր:

Որպես օրինակ, թվարկեմ մի քանիսը միայն, որոնց վերահրատարակումներում իմ հեղինակությունը կամ ընդհանրապես չի հիշատակվում, կամ հիշատակվում է ընդամենը, որպես նյութի գրառող՝ այլ անձի հեղինակությամբ:

1. Կոմիտասի կյանքի վերջին շրջանի մասին իմ հարցազրույցը ֆրանսահայ հայտնի հոգեբույժ Լուիզ Ֆոլ Չովհաննիսյանի հետ. «Тайна Виль-Жуиф», «НВ», 10.10.2001: Հրատարակված է անթիվ-անհամար կայքերում՝ այդ թվում թարգմանաբար:

Մինչդեռ սա ռուսերենով առաջին (հայերենով երկրորդ) անդրադարձն է այն տարուցված խնդրին, որը հարցականի տակ է դնում Վարդապետի հոգեկան հիվանդությամբ տառապելու նախկինում ընդունված փաստը: Բավական ջանքեր պահանջվեցին, որպեսզի Լուիզ Ֆոլ Չովհաննիսյանի այս եզրակացությունն ընդհանրապես ուշադրության արժանանա կոմիտասագետների միջավայրում: Այսպիսով հոդվածը շրջադարձային նշանակություն ունի հայագիտության ասպարեզում: Այն սկզբից համառորեն անտեսվել է, իսկ համացանցի զարգացմամբ՝ տարածվել մասնակի (քանի որ հոգեբույժի անունը նշվում է) գրագողության եղանակով: Ընդգծեմ, որ Լուիզ Ֆոլ Չովհաննիսյանը ոչ միայն Գրողների միության միջնորդությամբ հենց ինձ էր ընտրել որպես հարցազրուցավար, այլև, չտիրապետելով ռուսերենին, բառ առ բառ հանձնարարել էր ստուգել տեքստը՝ ձգտելով ճշգրտորեն տարածել իր եզրակացությունները ոչ միայն Ֆրանսիայում և Հայաստանում, այլև օտարալեզու ընթերցողի շրջանակներում:

2. Իրինա Տիգրանովայի հետ հարցազրույցը «История любви», «НВ», 03 օգոստոսի 1999 «Вспоминая Тертеряна: Վերստիպել է «Тертерян в кругу друзей» (сб. статей), Нижний Новгород, 2000 թ. ժողովածուում: Հոդվածն, ըստ իս, նույնպես շրջադարձային նշանակություն ունի հայ երաժշտագիտության և հոգեվերլուծության ասպարեզներում, քանի որ առաջին անգամ հրապարակային հնչեղություն է հաղորդում մեր մեծ երաժիշտների անձնական կյանքի մանրամասներին, ինչը կարևոր նշանակություն ունի անձի ճանաչողության համար, մեր մեծերին մտերմիկ-մարդկային, այլ ոչ կանոնիզացված տիրույթում ընկալելու համար: Նշեմ, որ Իրինա Տիգրանովան ինքն էր որոշել ինձ հարցազրույց տալ և պարզաբանել կյանքի իմաստն ու բովանդակությունը՝ Ավետ Տերտերյանի հետ իր հարաբերությունները: Ես այս պարագայում հանդիսացել եմ առաջին հերթին հոգեվերլուծող, սպա միայն հարցազրուցավար և երաժիշտ: Հոդվածն Իրինա Գեորգիևնային այնքան էր դուր եկել, որ նա նպատակ ուներ մեր միասնական ուժերով ևս մի քանի նյութ պատրաստելու:

Փաստ է, որ փայլուն գրիչ ունեցող հանրահայտ երաժշտագետը չգրեց այս ամենի մասին՝ գերադասելով հարցազրուցավարի «ավելորդ» միջամտությունը:

3. *Չարեն Սվալայն. «Ориентация на Запад есть ориентация на безумие», «НВ», 2 սեպտեմբերի, 2000 թ.:*

Հրատարակված է Կ. Սվալայնի հեղինակային կայքում, սակայն հետագայում հանվել է կայքից՝ արդեն տարածվելով համացանցի տիրույթներում: Նման մեծ գիտնականի կողքին հայտնվելը, որն իմ ուսուցիչն է եղել, ինձ համար ինքնին մեծ պատիվ է: Հնարավոր չէ գերազնահատել Սվալայնի ներդրումը հայ և համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմության մեջ. նա ֆանտաստիկ հզորության երկերի հեղինակ է, ես կասեի՝ փիլիսոփա-պոետ: Բսկ օտար ափերում գտնվելով՝ նաև համամարդկային չափանիշներով, Հայոց աշխարհի տեղն ու դերը գնահատողն է: Հենց դրան էր ուղղված մեր հարցազրույցը՝ Հայաստանի առաքելությանը համաշխարհային զարգացումների նորագույն փուլում:

Հետագոտելով 15 հունիսի 2006-ին ընդունված և գործող Հեղինակային իրավունքի մասին օրենքի որոշ դրույթները, պարզեցի հետևյալը.

Հոդված 6. Հեղինակը

Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը:

Հոդված 8. Հեղինակության կանխավարկածը

1. Հեղինակ է ճանաչվում այն անձը, ում անունը՝ որպես հեղինակ նշված է ստեղծագործության վրա, կամ ում անունը, որպես հեղինակ նշված է ստեղծագործությունը հրատարակելիս:

Հոդված 12. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները

3. Անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի և անփոխանցելի են և պահպանվում են անժամկետ, բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն հեղինակի կյանքի ընթացքում:

Հոդված 22. Ստեղծագործության ազատ օգտագործումը

1. Ազատ օգտագործում է համարվում առանց հեղինակի համաձայնության և վարձատրության, սակայն հեղինակի անվան և ստեղծագործության սկզբնաղբյուրի պարտադիր նշումով, ստեղծագործության օգտագործումը, որը չի հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին և չի վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը:

Հոդված 32. Հարցազրույցի նկատմամբ հեղինակային իրավունքը

1. Հարցազրույցի նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է հարցազրույց տվող և հարցազրույց անցկացնող անձանց՝ որպես համահեղինակների, էթե նրանց միջև չկա այլ պայմանավորվածություն:

2. Հարցազրույցի հրատարակումը թույլատրվում է հարցազրույց տվող և հարցազրույց անցկացնող անձանց համաձայնությամբ:

Հարց է ծագում, իսկ ավելի ճիշտ չէր, արդյո՞ք, այդօրինակ հարցազրույցներն ստորագրել հետևյալ կերպ. պատրաստեց կամ գրառեց Լիլիթ Եփրեմյանը:

Բազմաթիվ նյութեր, որոնց հեղինակային նյութի վերափոխման կամ այս ու այն ձևով մշակման պատասխանատուն ես եմ եղել, այդպես էլ ստորագրում եմ՝ պատրաստեց Լ. Ե.: Բայց «գրառեց»-ը արդարացված է այն դեպքում միայն, երբ ռեսպոնդենտը (հարցազրույց տվողն) ընկալում է զրուցավարին, այսպես ասած, դիկտոֆոնի դերում, և ես ընդամենը ձևակերպում եմ իր նյութը՝ ո՛չ հարցերով, ո՛չ էլ այլ կերպ անձնապես մասնակցություն ունենալով այդ նյութի գոյացման, վերհանման ընթացքին: Այդպիսի օրինակ է Կոնստանտին Պետրոսյանի հետ Կոմպոզիտորների միության «Հայ կոմպոզիտոր» ամսագրի երրորդ համարում հրատարակված նյութը՝ «Մի լուսանկարի պատմություն», երբ նա ԱՄՆ-ում գտնվելով, Վայբերով պատմեց իրողությունը և հետո ասաց, որ շատ գոհ է, թե ինչպես եմ կազմակերպել նյութը՝ կոմպոզիցիա ստեղծել:

Բայց, երբ ես իմ մտահղացմամբ՝ հարցերով կամ պահանջներով, կամ հոգեբանական, գաղափարական որոշակի ազդեցություն եմ գործում «ռեսպոնդենտի»՝ զրուցակցի վրա, դա ձևակերպման խնդիր չէ, այլ նյութը միասնաբար ստեղծելու, այսպես ասած, «ծնվածն էլու» մասին է: Մարդը հանկարծ սկսում է խոսել, որոնք երբեք որևէ մեկին չի պատմել, ինքն իրեն էլ չի խոստովանել ու մինչ այդ պահը չի էլ փորձու դրա մասին մտածել վախում է իրենից: Այդպիսին է օրինակ, Սերգեյ Աղաջանյանի հետ մեր զրույցը, երբ հարցազրույցի ավարտին կոմպոզիտորն ինքը ասրափեց իր ասածներից («Холодная зима 52-го», «НВ», 3.10. 2000):

Ուզում եմ ավելացնել, որ իմ մենագրությունում (Эдвард Мирзоян в письмах и диалогах, Ер.Тигран Мек, 2011, - 616 с.) գետեղված են հայտնի մարդկանց կարծիքները կոմպոզիտորի մասին, որոնք նույնպես հարցազրույցներ են, բայց ներկայացված են առաջին դեմքով: Դրանք հենց ես եմ վարել՝ նկատի ունենալով գրքի ուղղվածությունը և շոշափվող հարցերի շրջանակը: Բայց հարցերը տեքստում չեն երևում: Առանց հարցերը վերջնական տեքստում վերհանելու հարցազրույց ծավալելը կարելի է իմ մասնագիտական ձեռագրի առանձնահատկությունը համարել: Հենց լրագրողական իմ գործունեությանը ծանոթանալով՝ Էդվարդ Միրզոյանը հրավիրեց ինձ համագործակցության՝ նախապես խնդրելով չգրել ավանդական երաժշտագիտական ոճով և մոտեցմամբ, քանի որ, իր իսկ խոսքով. «դա ոչ մեկին պետք չէ»: Բայց բացառապես ավանդական երաժշտագիտական ոճով առաջնորդվողները համարեցին այդ մոտեցումը ոչ պրոֆեսիոնալ՝ «Ժամանակի լրագրողական»: Թողնենք այդ վեճը գալիք սերունդներին:

Մակայն մի բան պարզ է. հարցազրույցը բարդ գործընթաց է, որտեղ զրույցը ծավալվում է մշտապես երկու (կամ ավելի) հոգու միջև՝ նրանց միջև անտեսանելի, բայց զգայուն փոխազդեցությունների ներքո: Եվ տեքստը հրատարակող հեղինակի՝ հոդվածի գլխագրում պարզ կերպով երևացող անունը չի կարող անտեսվել միայն այն պատճառով, որ իր տված հարցերը չեն երևում նյութում: Եթե կա հարցազրույց, ապա կա հարցազրուցավար և ռեսպոնդենտ՝ զրուցակից, ով նպատակահարմար է գտել ոչ թե գրիչ առնել և շարադրել իր ասածը, այլ պատվիրակել է դա հարցազրույցը վարողին, առանց որի այդ հոդվածը չէր լինի, և կամ բոլորովին այլ տեսք ու բովանդակություն կունենար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Օրենք հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին: <https://www.arlis.am/document view.aspx?docID=25161>
2. Պետրոսյան Կ., Մի լուսանկարի պատմություն, //Հայ կուլտուրալիստ, ՀԿՄ ամսագիր, 2021, N 3:
3. *Епремян Л.*, История любви, //Новое Время, 03.08. 1999.
4. *Епремян Л.*, Ориентация на Запад есть ориентация на безумие., //НВ, 2.09. 2000. https://web.archive.org/web/ 20081007020141 /http://www.karenesswssjan.com/Interviews_ orientation.htm
5. *Епремян Л.*, Холодная зима 52-го, //НВ, 3.10. 2000.
6. *Епремян Л.*, Тайна Виль-Жуиф, //Новое Время, 10.10.2001. <http://www.komitas.am/rus/illness.htm>
7. *Епремян Л.*, Эдвард Мирзоян в письмах и диалогах, Ер.: Тигран Мец, 2011, - 616 с.
8. *Тигранова И. Г.*, Вступительная статья к сб. /Тертерян в кругу друзей., Нижний Новгород, 2000.

Law of the Republic of Armenia on Copyright and Related Rights. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=25161>

Petrosyan K. "The Story of a Photograph", // Armenian Composer, ACU's magazine, 2021, issue 3.

Yepremyan L., "A Love Story", //Novoye Vremya, 03.08.1999.

Yepremyan L., "Orientation to the West is an Orientation to Madness",

//NV, 2.09.2000. https://web. archive.org/web/20081007020141 /http://www. karenesswssjan.com/Interviews_ orientation.htm

Yepremyan L., "The Cold Winter of 1952", //Novoye Vremya, 3.10.2000.

Yepremyan L. "The Mystery of Villejuif", // Novoye Vremya, 10.10.2001. <http://www.komitas.am/rus/illness.htm>

Yepremyan L. "Edward Mirzoyan in Letters and Dialogues", Yerevan: Tigran Mets, 2011, 616 pages.

Tigranova I. T., Introductory article to the Collection "Tigran Terteryan Among Friends", (collection of articles), Nizhniy Novgorod, 2000.

REFERENCES

1. HH Orenq heghinakayin iravunqi ev harakitz iravunqneri masin. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=25161>
2. *Petrosyan K.*, Mi lusankari patmuthyun, //Hay kompositor, HKM gmsagir, 2021, N 3.
3. *Yepremyan L. K.*, Istoriya lyubvi., //Novoye Vremya, 03.08.1999.
4. *Yepremyan L.K.*, "Orientatziya na Zapad est' orientatziya na bezumie., //NV, 2.09.2000. https://web. archive.org/web/20081007020141 /http://www. karenesswssjan.com/Interviews_ orientation.htm
5. *Yepremyan L. K.*, Kholodnaya zima 1952", //Novoye Vremya, 3.10.2000.
6. *Yepremyan L. K.*, Tajna Ville-Juif, // Novoye Vremya, 10.10.2001. <http://www.komitas.am/rus/illness.htm>
7. *Yepremyan L. K.*, Edvard Mirzoyan v pis'makh i dialogakh", Yer.: Tigran Mets, 2011, - 616 s.
8. *Tigranova I. G.*, Vstupitel'naya stat'ya k sbornika / Terteryan v krugu druzej", (sbornik state), Nizhniy Novgorod, 2000.

Հեղինակի մասին. ԼԻԼԻԹ ԿԱՐԼԵՆ ԵՄՐԵՄՅԱՆ (ծ.14.05.1963, ք. Երևան) երաժշտագետ, հոգերան, սոցիոլոգ, լրագրող, թարգմանիչ, գեղասպանագետ: Ավարտել է ԵՊԿ-ի երաժշտագիտական բաժինը (1989 թ., դեկ.՝ պրոֆեսորներ Ռ. Հ. Ստեփանյան, Ն. Վ. Դերոյան), Ռուսաստանի Պետական արվեստաբանության ինստիտուտի (ՊԱԻ, Մոսկվա, դեկ.՝ արվ. դոկտոր Ի. Ռ. Յոլյան) ասպիրանտուրան ԵՊԿ-ի հետ համատեղ (1993 թ.), նույն ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզը, 1995 թ., Մոսկվա: 2001-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Գործնական հոգեբանների պատրաստման կենտրոնը, 2006-ին՝ ՋԼՄ Կովկասյան ինստիտուտը՝ «տարածաշրջանագիտություն» մասնագիտացմամբ: 1996-ից աշխատում է ԵՊԿ-ում, դրոցենտ է (2002) դասավանդում է հոգեբանություն, մանկավարժություն, համընդհանուր երաժշտության պատմություն դասընթացները, 1996-ից՝ «Новое Время»-ի թղթակից է: Իր երաժշտագիտական ուսումնասիրություններում հաճախ օգտագործում է այլ գիտությունների մերթոդաբանությունը՝ նորովի լուսարանելով շատ արդիական երաժշտագիտական հարցեր, աշխատում է միջառարկայական հետազոտությունների ոլորտում, պրակտիկ հոգեբան է: Հեղինակ է մենագրության «Էդվարդ Միրզոյանի նամակներում և երկխոսությամբ», Եր., Տիգրան Մեծ, 2011 թ., (տոսերեն, 616 էջ): Մասնագիտացած է էթնիկ ավանդույթի, քաղաքային ֆոլկլորի, ինչպես նաև Հայոց գեղասպանության սերնդե-սերունդ փոխանցվող խեղձան խնդիրներով: Ավելի քան 20 գիտական և 500-ից ավելի հրատարակչական հոդվածների հեղինակ է: Հայաստանի կոմպոզիտորների միության (1997-ից) և Հայաստանի գրողների միության (2016-ից) միությունների անդամ է:

Об авторе: ЛИЛИТ КАРЛЕНОВНА ЕПРЕМЯН (род.14.05.1963, Ереван) - музыковед, психолог, социолог, журналист, переводчик, геноцидолог. В 1989 окончила Ереванскую государственную консерваторию им. Комитаса по специальности "музыковедение" (кафедра теории музыки, классы проф.: Р. О. Степаняна, Н. В. Дерояна), 1993 - аспирантуру Еосударственного института искусствознания (Москва, класс докт. иск. И. Р. Еолян) совместно с ЕГК В 1995 в ТИН (Москва) защитила канд. диссертацию. В 2001 окончила Центр подготовки практических психологов при ереванском Еосударственном университете, в 2006 - Кавказский институт СМИ по специальности "Регионоведение". С 1996 по настоящее время в ЕЕК ведет курс лекций по психологии, педагогике, истории музыки (бакалавриат), основы музыкальной научно-педагогической деятельности (магистратура). Доцент (2002). С 1996 является корреспондентом газеты "Новое Время". Автор монографии о композиторе Эдварде Мирзояне ("Эдвард Мирзоян в письмах и диалогах", Ер., 2011), занимается феноменом этнической традиции, вопросами городского фольклора, проблемой трансгенерационной травмы Ееноцида армян, практикующий психолог. Работает в области междисциплинарных исследований, в музыковедческих исследованиях использует методы других наук, по-новому освещая проблемы музыковедения. Автор более 20 научных статей, в том числе "Этнокультурный подход в социологии музыки", "Лики этнической традиции", "Виноваты ли мы, или "Усвоенная беспомощность" как гибель "внутреннего агента", "Маргинальность как судьба", "Судьбоносный выбор (к проблеме осмысления векторов развития армянской музыки XX века)" и др., более 500 публицистических статей. Практикующий психолог, член Союза композиторов Армении (с 1997) и Союзов писателей Армении (с 2016).

About the author: LILIT KARLEN YEPREMYAN (bom May 14, 1963, Yerevan) - musicologist, psychologist, sociologist, journalist, translator, genocidal scholar, PhD in Arts. She graduated from YSC in 1989 in musicology (Chair of the Theory of Music, classes of Prof. R.O. Stepanyan and Prof. N. V. Deroyan). In 1993 she got a postgraduate degree jointly at the State Institute of Art Studies (Moscow, class of I. R. Eolyan, PhD in Arts) and YSC. In 1995 she defended her PhD thesis at SIA (Moscow). In 2001 she graduated from the Center of training of Practiced psychologists at Yerevan State University, in 2006 - from the Caucasian Mass Media Institute in regional studies. In her researches uses methods in the field of musicological and interdisciplinary sciences. Since 1996 she has been holding a series of lectures in psychology, pedagogy, history of music (bachelor's degree program), fundamentals of musical scientific-pedagogical activity (master's degree program) in YSC, also she is Associate Professor (since 2002). Since 1996, she has worked for the newspaper "Novoye Vremya" as a correspondent. She is author of the monograph about the composer Edward Mirzoyan ("Edward Mirzoyan in letters and dialogues", Yer., 2011), she deals with the phenomenon of ethnic tradition, issues of urban folklore, the problem of transgenerational trauma of the Armenian Genocide. She works in the field of interdisciplinary studies, uses methods of other sciences in musicological studies, approaches the problems of musicology from a new perspective. Author of more than 20 scientific articles, including "Ethnocultural Approach in the Sociology of Music", "Features of Ethnic Tradition", "Are we to blame, or "Internalized helplessness" as the death of an "internal agent", "Marginality as Fate", "Fatal Choice" (to the problem of understanding the vectors of the development of the XX-century Armenian music) and others, more than 500 journalistic articles. She is a practicing psychologist, member of the Composers Union of Armenia (since 1997) and Writers Union of Armenia (since 2016).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ